ՆԱԽԱԳԻԾ-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2020թ. N ----Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 178-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2020 թվականի ծրագրի վերաբերյալ» N 178-Ն որոշման հավելվածի VI-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 12-23-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքի ավագանու
2020 թվականի մայիսի --- ի
N---Ն որոշման

12	Արաբկիր	01-003-113-041	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Աղբյուր Սերոբի փող. հ.46/1 հասցեին կից	
13	Արաբկիր	01-003-113-044	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Աղբյուր Սերոբի փող. հ.44/3 հասցեին կից	
14	Արաբկիր	01-003-113-197	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Աղբյուր Սերոբի փող. հ.44/5 հասցեին կից	
15	Արաբկիր	01-003-5037-001	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Աղբյուր Սերոբի փող. հ.48/6 հասցեին կից	
16	Արաբկիր	01-003-224-683	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Արաբկիր 41-րդ փող. հ.31/2	
17	Արաբկիր	01-003-226-031	Բնակավայրերի	Խառը կառուցապատման	Հ.Մուրադյան փող. հ.34	
18	Էրեբունի	01-005-218-001	Բնակավայրերի	Խառը կառուցապատման	Բուռնազյան փող. հ.54	
19	Կենտրոն	01-006-001-001	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Գ.Էմինի փող. հ.26	
20	Կենտրոն	01-006-001-106	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Անտառային փող. հ.160	
21	Կենտրոն	01-006-232-069	Բնակավայրերի	Խառը կառուցապատման	Աղյուսագործների 2-րդ փող. հ.31	
22	Կենտրոն	01-006-502-142	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատման	Զորագյուղ փող. հ.35	
23	Քանաքեռ Զեյթուն	01-012-1111-001	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Գոգոլի փող. հ.69/3	

»:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 178-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է ընդունում Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ, որում պետք է նշվեն նաև հողամասերի գտնվելու վայրը, ծածկագրերը, Երևանի գլխավոր հատակագծով սահմանված նպատակները:

Հիմք ընդունելով նշվածը, Երևան քաղաքի ավագանու մի շարք որոշումներով հաստատվել են համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ցանկեր և Երևանի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N178-Ն որոշման հավելվածի 44-րդ կետով 2020 թվականին օտարման և (կամ) օգտագործման տրամադրման համար առաջարկվող գույքի կազմում է ներառվել Երևան քաղաքի ավագանու որոշումներով հաստատված Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010-2019 թվականների ծրագրերում ընդգրկված, սակայն դեռևս չօտարված Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը և հողամասերը:

Ներկայումս ներկայացվում է համայնքային սեփականություն հանդիսացող թվով 12 հողամասերի վերաբերյալ ցանկ և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներից ելնելով առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N178-Ն որոշման հավելվածի VI-րդ գլխի 2020 թվականի օտարման առաջարկվող հողամասերի ցանկը լրացնել 12-23 կետերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N178-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N178-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 178-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N178-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում եկամուտների և ծախսերի էական փոփոխություններ չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ